ԻՆՉՈՒ ԱՐԴԵՆ ՋՈՒՀՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ ՄԵԶ ԱՎԵԼԻ ԿԵՆԴԱՆԻ Է ԴԱՐՁՆՈՒՄ

Լիովին զարգացած զինվորի, ընտրության և բանջարանոցների մասին


Սէմ Էլայմո *Մտածող: ԱՄՆ ՌԾՈՒ "Navy SEAL" հատուկ ջոկատային: Կոլումբիայի համալսարանի մագիստրոս շրջանավարտ: Իմաստի, մարդաբանության, պատերազմի, ինչպես նաև թզի և շների մասին հոդվածների հեղինակ:*

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12 2026

https://www.whatthen.org/p/why-knowing-we-are-already-dead-makes?utm_campaign=email-half-post&r=212oc2&utm_source=substack&utm_medium=email



Հ. Այվազովսկի. Մլեթից դեպի Գուդաուրի ճանապարհը: 1868 թ.

Զինվորը մարդու մասնագիտությունը դարձնում է համընդհանուր՝ մահվան միջոցով:

Որքան շատ է իմանում զինվորը մահվան մասին, այնքան ավելի շատ է իմանում կյանքի մասին:

Մենք տեսնում ենք, որ այս գիտակցումը գալիս է աստիճանաբար:

Դրա առաջին փուլն է՝ «Ես չեմ ուզում մահանալ»: Երբ մենք քնած ենք, մեր թոքերն ինքնուրույն են գործում: Երբ մենք կռանում ենք կոշիկը վերցնելու և տեսնում ենք մեզ

նայող սև ու կարմիր արարած, վեր ենք ցատկում, և մեր մաշկը փշաքաղվում է՝ առանց մեր կողմից որևէ ջանք գործադրելու: Մարտում մահանալու դժկամությունն օգտակար է առողջությանը, քանի որ մահանալու ցանկությունը մարտիկին բեռ է դարձնում: Դա վնասակար է նաև նրանով, որ մարտիկը չի կարող ամբողջ գիշեր հետևել իր ստորաբաժանմանը, որը հայտնվել է դժվարին վիճակում, և որին ոչնչացման վտանգ է սպառնում:

Զարգացման երկրորդ փուլն է՝ «Ես չեմ կարող մահանալ»: Բավարար պատրաստվածությամբ կամ գուցե մի փոքր (բայց ոչ մեծ) մարտական փորձ ունեցող մարտիկը կարող է հավատալ, որ ինքն անխոցելի է: Փամփուշտները չեն կարող թափանցել նրա պողպատե մաշկը: Նա հավատում է, որ չկա մարտում իրենից արագ թշնամի, իսկ ջունգլիների տանջող շոգին ավելի դիմացկուն է: Նա չի վախենում գիշերից, քանի որ գիշերը վախենում է նրանից... մինչև այն գիտակցման պահը, որ իրականում կարող է մահանալ: Եվ երբ այդ դաժան իրականությունն ընկնում է նրա վրա, երբ մանրագույն բեկորների փշրված գնդակը խոցում է նրա աչքը կամ ականջը, իսկ ինքը չի կարող մի թիզ շարժվել, քանի որ հաջորդը կցրի նրա գանգը, ապա նա անակնկալի է գալիս: Փլուզվում է անմահության ամբողջ ճարտարապետությունը, որի վրա նա կառուցել է իր ինքնապատկերը, և դրան զուգահեռ՝ նրանից ձախ և աջ կռվող յուրայինների համար պայքարելու ունակությունը:

Զարգացման ավարտական փուլը հետևյալն է. «Ես արդեն մահացել եմ»: Մարզումները սովորաբար թույլ են տալիս հասնել այս կետին, և որոշակի քանակությամբ մարտերից հետո նա անցնում է մնացած ճանապարհը: Այս մարտիկը սիրով է նայում իր հանդերձանքին և զենքին: Նա արհեստավարժությանը և ուժին վերաբերվում է որպես ընտրված մասնագիտության: Նա այնքան է միաձուլվում իր ստորաբաժանմանը, որ մարտական ընկերների կյանքը դառնում է ավելի արժեքավոր, քան իր սեփականը: Նա գիտի, որ այդ ամենն անում է որպես մահացած մարդ: Նրա ներքին հանգստությունն զգալիորեն գերազանցում է արտաքին դժոխքը: Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերան և գրող Ջեյմս Ջոնսը լիովին ձևավորված զինվորի մասին գրել է. *«Նա նախապես գիտի և ընդունում է, որ զոհված է, չնայած գուցե դեռ որոշ ժամանակ քայլելու է»*: Սա զինվորի այն տեսակն է, որին զարգացման վաղ փուլում սկսնակները նայում են որպես գերմարդկային գիտակցության տիրոջ: Մեր մարտիկը վախ և զայրույթ է ապրում, բայց նա դրանք ուղղորդում է մեկ առաքելության՝ այս պահի միակ առաջադրանքին, երբ յուրաքանչյուր վայրկյան բացահայտում է մի ամբողջ աշխարհ:

Կարևոր կետն այն է, որ լիովին կայացած զինվորը գերմարդկային գիտակցության հասանելիություն չունի: Նա պարզապես գիտակցել է մարդկային հիմնական ճշմարտությունը:

Մենք իսկապես կենդանի ենք միայն այն ժամանակ, երբ գիտենք, որ արդեն մահացած ենք:

Կողմնակի առավելությունները բազում են, և պատերազմական գոտուց դուրս դրանք կարող են անտրամաբանական թվալ:

Արդեն մահացած լինելու գիտակցությունն ավելացնում է չզոհվելու հավանականությունը: Դժվար ժամանակներում կյանքի և մահվան միջև անջրպետն այլևս չի մթագնում մեր միտքը, և մենք կարող ենք սթափ գնահատել այն երեք-չորս տարբերակները, որոնք ունենք մարտում հաղթելու համար: Չնայած մեր «հողանցված» լինելուն՝ մենք, այնուամենայնիվ, ունակ ենք դառնում իրավիճակը դիտել վերևից՝ մեր «ես»-ի անխոցելի մի ապաստարանից, որը մահը կարող է զրոյի հասցնել, բայց երբեք ի վիճակի չէ ոչնչացնել:

Իմաստը դրսևորվում է կոնկրետ իրերի գերզգայուն ընկալման եղանակով: Ժամանակը դանդաղում է, ընկալումը՝ խորանում: Խուճապը ճնշվում է քթի միջով սահուն շնչառությամբ և մեր քթանցքերի յուրաքանչյուր մազին օդի դիպչելու զգացումով: Մենք հանկարծ տեսնում ենք, թե ինչ արյան կարմիր ծաղկաթերթեր ունի նռան ծաղիկը, ինչքան անհատակ են ծիածանաթաղանթի ակոսները: Մենք զգում ենք լուսնի արտացոլված լույսը, «Մ» տառի արտասանության ձայնի վերջին տասներորդ մասի սկզբնական թրթռումները, տեսնում ենք տաքացած հրափողից գոլորշու հոսքերը և զգում մեր ուղեղի հնչեցրած պարզ հրամանով մկանների կծկման ու թուլացման փոքրիկ ռիթմիկ ցնցումները: Սա է պատճառներից մեկը, որ որոշ զինվորներ սկսում են պատերազմն ընկալել որպես տուն, իսկ տունն ինքնին՝ որպես օտար մի բան:

Հետևաբար, սխալ է այն միտքը, թե մեզ անհրաժեշտ է գլխից խոցվելու կամ մեզ համար թանկ մարդկանց տառապանքները զգալու ռիսկը, որպեսզի ճանաչենք այն, ինչը մենք կարող ենք հանգիստ ընկալել որպես կենսաբանական օրենք. գիտակից միտքը արթնանում է միայն սեփական կործանման սպառնալիքին բախվելիս: Աշխարհում չկան ավելի լավ ուսուցիչներ, քան մեր ուսին մահվան սառը, ոսկրոտ ձեռքի ամուր բռնելը:

Դասը շատ ավելի խորն է, երբ մենք մեր ընտրությամբ, այլ ոչ թե բռնի կերպով ենք գիտակցում, որ կյանքի իմաստը ոչ թե տասը տարի հետո է, այլ մեր դեմքից տասը թիզ հեռավորության վրա: Մահն անտեղի է դառնում, երբ մենք այն համեմատում ենք այն առաջադրանքի հետ, որը մենք ինքներս մեզ դրել ենք այս դասն ընկալելուց հետո:

Մոնտենը պատկանում էր ռազմական ազնվականությանը և արշավներում բազում ճտքակոշիկ էր մաշել, նախքան հետևյալ կանխադրույթը ձևակերպելը. *«Ես ուզում ենք, որ մարդիկ գործեն այնպես, որպեսզի կյանքի իրենց պարտականությունները կատարեն հնարավորինս լիարժեք. ուզում եմ, որ մահն ինձ բռնի կաղամբ տնկելիս, բայց ցանկանում եմ լիակատար անտարբերություն պահպանել դրա նկատմամբ և նույնիսկ ավելին՝ իմ ոչ ամբողջությամբ մշակված բանջարանոցի նկատմամբ»*:

Ճշմարտությունն այն է, որ անառիկ ապաստան կառուցելու համար հարկավոր չէ գերաններից ու պողպատաթիթեղներից ծածկ փռել:

Բանջարանոցը բավական է: